ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	վերնաշապիկներ	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Վերնաշապիկ երկարաթև: Մուգ կապույտ Midnight Navy (սև երանգին մոտ) #0a031d Color Palette գունի կտորից, առնվազն 67% բամբակ և առավելագույնը 33% պոլիէսթեր, քաշը 1մ2 180 գ, ±3%, ուսադիրներով և ծալովի օձիքով: Անհրաժեշտության դեպքում մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, որը տրվում է կտորը արտադրողի կողմից: Ուղիղ ձևվածքով՝ տաբատի մեջ դրվող (կամ վրան դրվող՝

					առանձգական ժապավենով): Առաջամասերին մշակված են ձևավոր կափույրներով վրադիր գրպաններ, որոնք կոճկվում են մեկ օղակ-կոճակով և վերևի մասում ունեն 2,5 սմ բացվածք՝ տեսախցիկի ու ռադիոկայանի խոսափողի համար: Ձախ կողային կարի վրա կա բացվածք, ինչպես նաև ձախ գրպանի մեջ՝ ռադիոկայանի խոսափողի լարի անցկացման համար: Ուսամասից մինչև թևքի տակ կարվում է կրկնակի կտոր: Վերնաշապիկի առաջամասերին մշակվում է վրադիր, կրկնակի կտոր, որի վրա մշակվում են օղակներ և կարվում կոճակներ: Առաջամասը ունի երկու արտաքին կարեր, իսկ թիկունքը ամբողջական է և երկայնքով ունի երեք արտաքին կարեր: Թևքերի երկարությունը մինչև դաստակ՝ մշակված թեզանիքով: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության թևքանշան: Թիկունքի վերևի մասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է սպիտակ

					գույնով ասեղնագործված 5,5X28սմ «POLICE», իսկ աջ կրծքամասում կարվում է ներդիր, որի վրա կպչուն ժապավենով ամրանում է 2,8X13,5սմ «Ոստիկանություն» մակագրությամբ բառերը: Ձախ կրծքամասում կարվում է կրծքանշանի ներդիր: Վերնաշապիկը ունի օդանցքեր՝ շնչողունակությունն առավելագույնին հասցնելու համար: Ուսադիրները նույն կտորից, վերնաշապիկի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Ուսադիրները օձիքի մասում կոճկվում են մուգ կապույտ պլաստմասե կոճակով, իսկ ուսերի մասում կարված են: Արտաքին տեսքը՝ լուսանկարին համապատասխան: Փաթեթավորումը՝ Տեսականին 5 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Վերնաշապիկը պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը և լվանալու պայմանները: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի

					պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2					